## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 54-Ա

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին

***որոշում է՝***

1. Հաստատել համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Մարիկյան Հայկ | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Գագինյան Ատոմ | | |
| Նազարյան Սյուզաննա | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Իսպիրյան Անուշ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 55-Ա

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է հանձնել Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ:

Հիմք ընդունելով «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 09.03.2006թ. թիվ 351-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Ստեփանավան համայնքի փաստաթղթերը հանձնել Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ (համաձայն 1 հավելվածի):

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Մարիկյան Հայկ | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Գագինյան Ատոմ | | |
| Նազարյան Սյուզաննա | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Իսպիրյան Անուշ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 56-**Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ըստ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի, ՀՀ դատախազության և պետական գույքի կառավարման կոմիտեի միջև նախնական պայմանավորվածության ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Սուրբ Նշան փողոց թիվ 17 հասցեում գտնվող մասնաշենքում ՀՀ դատախազությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքը և մասնաշենքը ամբողջությամբ, սեփականության իրավունքով պետք է տրամադրվի Ստեփանավան համայնքին: Հաշվի առնելով վերը նշվածը անհրաժեշտ է ՀՀ դատախազությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համաչափ տարածք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 686-րդ, 687-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ստեփանավան համայնքին համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 23072014-06-0033 ՀՀ վկայականի սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Հ. Մեղապարտ փողոց թիվ 8/18 հասցեում գտնվող տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ դատախազությանը:
2. ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- |
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Մարիկյան Հայկ | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Գագինյան Ատոմ | | |
| Նազարյան Սյուզաննա | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Իսպիրյան Անուշ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 57-Ա

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳԱՌՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ «ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» /SEAP/ ՄՇԱԿՄԱՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի՝ այլ միջոցների ներգրավմամբ Ստեփանավան համայնքում կայուն զարգացում ապահովելու նպատակով ծրագրերի մշակման և իրականացման առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Տալ համաձայնություն «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» դաշնագրին միանալու, դաշնագիրը ստորագրելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Նվազեցնել $CO_2$ (և, հնարավորության դեպքում, ջերմոցային այլ գազերի) արտանետումները համայնքի տարածքում առնվազն 30%-ով մինչև 2030թ. մասնավորապես էներգաարդյունավետության բարձացման և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ավելի լայնածավալ կիրառման միջոցով:
3. Բարձրացնել համայնքի դիմակայունությունը կլիմայի հանդեպ՝ հարմարվողականության միջոցով:
4. Մշակել արտանետումների ելակետային կադաստր և իրականացնել կլիմայի փոփոխություն ռիսկերի և խոցելիության գնահատում:

5. Ներկայացնել կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողությունների ծրագիր՝ համայնքի ավագանու վերը հիշատակված որոշման ընդունման օրից երկու տարվա ընթացքում, և ներառել կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գաղափարները համապատասխան քաղաքականություններում, ռազմավարություններում և ծրագրերում:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Մարիկյան Հայկ | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Գագինյան Ատոմ | | |
| Նազարյան Սյուզաննա | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Իսպիրյան Անուշ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 58-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 29.12.2021 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի ավագանու 08.02.2022 թվականի «Ստեփանավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 06-Ն որոշումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 06.06.2022 թվականի թիվ 95/1 կարգադրության «Ստեփանավան համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու համար մշտական հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու և Ստեփանավան համայնքի ղեկավարի 11.04.2022թ. թիվ 64/1 կարգադրությունը ուժը կորցրած ճանչելու մասին» և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից վերջիններիս ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ 415000 (չորս հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
   1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |

Գրիգորյան Արմեն Փ.
Մարիկյան Հայկ
Բաղդասարյան Անուշ
Դավթյան Արմեն
Պապյան Արթուր
Գագինյան Ատոմ
Նազարյան Սյուզաննա
Նալբանդյան Աղունիկ
Կիրակոսյան Ջոն
Իսպիրյան Անուշ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 59-Ա

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ստեփանավան համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակությունը ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Ստեփանավան համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Արթուր Ենոքի Չատինյանի սեփականությունը հանդիսացող էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբեկտների գործառնական նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության 0.0611 հա հողամասը 06-077-0304-0004 ծածկագրից, փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |

Գրիգորյան Արմեն Փ.
Մարիկյան Հայկ
Բաղդասարյան Անուշ
Դավթյան Արմեն
Պապյան Արթուր
Գագինյան Ատոմ
Նազարյան Սյուզաննա
Նալբանդյան Աղունիկ
Կիրակոսյան Ջոն
Իսպիրյան Անուշ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 60-**Ա**

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԹՎՈՎ 21 ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երաժշտական և արվեստի դպրոցներին ազգային, փողային և լարային նվագարանների գծով 2021 թվականի ուսուցման համար 2021 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 30.12.2020թ. թիվ 2215-Ն որոշման հավելված 5-ի աղյուսակ 9-ով սահմանված դպրոցների համամասնություններին համապատասխան՝ Ստեփանավանի արվեստի դպրոց ՀՈԱԿ-ին 44 սովորողի համար հատկացվել է տարեկան 9590,6 ՀՀ դրամ: 2022 թվականի հունվարի 24-ին կնքված պայմանագրի համաձայն՝ սովորողներին տրվող վարձավճարները կրճատվել է և դարձել է 23 սովորողի համար: 21 սովորողի ուսման վարձը փոխհատուցելու համար անհրաժեշտ է 195000 ՀՀ դրամ 2022 թվականի ուսումնական տարին ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Թույլատրել մինչև 2022 թվականի ուսումնական տարվա ավարտ 21 սովորողի հաշվով 195000 ՀՀ դրամի չափով վարձավճար չվճարվիլ (հավելվածները կցվում են):
1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Ներկայացնել կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողությունների ծրագիր՝ համայնքի ավագանու վերը հիշատակված որոշման ընդունման օրից երկու տարվա ընթացքում, և ներառել կլիմայի փոփոխության

մեղմման և հարմարվողականության գաղափարները համապատասխան քաղաքականություններում, ռազմավարություններում և ծրագրերում:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Մարիկյան Հայկ | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Գագինյան Ատոմ | | |
| Նազարյան Սյուզաննա | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Իսպիրյան Անուշ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«17» հունիսի 2022 թվականի N 61-**Ա**

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Ստեփանավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 07/09/2022թ., ժամը 14:00 -ին:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Մարիկյան Հայկ | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Գագինյան Ատոմ | | |
| Նազարյան Սյուզաննա | | |
| Նալբանդյան Աղունիկ | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Իսպիրյան Անուշ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ